

ԵԼՀ գիտխորհրդի՝  
2021 թ. դեկտեմբերի 1-ին կայացած նիստի  
թիվ 4 արձանագրություն

Օրակարգ

1. ԵԼՀ ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի նիստին 36 անդամներից ներկա էին 30-ը: Նիստին ներկա էր նաև ԵՊՀ ռեկտոր պ-ն Հ.Հովհաննիսյանը: Նիստի նախագահ ընտրվեց Բ.Գ.Դ. պրոֆեսոր Ս.Գասպարյանը: Նա ԵԼՀ դեկան Գ.Բարսեղյանին հրավիրեց ամբիոնի մոտ՝ ներկայացնելու տարեկան հաշվետվությունը: Գ.Բարսեղյանը շնորհակալություն հայտնեց գործընկերներին համատեղ աշխատանքի համար:

Դեկանը նշեց, որ ԵԼՀ ֆակուլտետի դեկանի պաշտոնում 2020-2021 ուստարվա ընթացքում ԵՊՀ գործող կանոնադրության և օրինադրության իրավասության շրջանակներում իրականացրել է ուսումնամեթոդական, գիտական և դաստիարակչական աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը:

**Ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքներ**

Ամենակարևորների շարքում Գ.Բարսեղյանը նշեց ֆակուլտետի տարբեր ամբիոններում գործող ուսումնական աշխատանքային պլաններով նախատեսված մասնագիտական դասընթացների դասավանդման ապահովումը և դրա վերահսկողության իրականացումը: Նշվեց նաև, որ մշտապես կարևորվել է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման, լրամշակման և բարելավման գործընթացը: Ամբիոնների ուշադրությունից դուրս չի մնացել նաև դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և դասավանդման արդյունավետությանը նպաստող տարբեր այլ նյութերի հավաքագրման, ստեղծման ու հրատարակման աշխատանքը:

Գ.Բարսեղյանը հավելեց, որ դեկանի գործունեության կարևորագույն կողմերից է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական գործընթացների, ընթացիկ և հանրագումարային քննությունների և ստուգարքների նախապատրաստման և իրականացման աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը, որը, շնորհիվ ամբիոնների հետ մեր հետևողական աշխատանքի, նույնպես կատարվել է հավուր պատշաճի:

Ֆակուլտետում մշտական ուշադրության կենտրոնում է եղել և շարունակում է մնալ ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման կարևորագույն գրավականներից մեկը՝ ուսումնական և

աշխատանքային կարգապահության խնդիրը: Դեկանատի և դեկանի տեղակալների ջանքերով նվազագույնի է հասցվել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների անհարգելի բացակայությունների թիվը:

### **Գիտահետազոտական աշխատանքներ**

2020-2021 ուսումնական տարին գիտահետազոտական աշխատանքների առումով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի համար ավարտվել է բավականին արդյունավետ: Ֆակուլտետի 9 ամբիոններն էլ ջանք ու եռանդ չեն խնայել մնալու իրենց գիտական բարձր մակարդակի վրա, տարին ավարտելու բարձր արդյունավետությամբ: ԵԼՀ ֆակուլտետի 9 ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների արդյունքներն են հրատարակված մի քանի մենագրություններ և բազմաթիվ գիտական հոդվածներ, որոնք հրատարակվել են մեր հանրապետության և արտերկրի հայտնի ամսագրերում:

Թե՛ գիտական և թե՛ ուսումնական առումով կարևորվել է հաշվետու ուսումնական տարում արտերկրի տարբեր առաջատար համալսարաններից ֆակուլտետ ժամանած որակյալ մասնագետների դասախոսությունների ունկնդրումը և քննարկումները կազմակերպելու գործը, որը նույնպես արդյունավետ է ընթացել և դեռ շարունակվում է:

Չնայած համավարակի տարածմանը, ֆակուլտետում աշխուժացել է ուսանողական կյանքը: ԵԼՀ ֆակուլտետի ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել թե՛ Երևանի պետական համալսարանի, և թե՛ հանրապետության այլ բուհերի կողմից իրականացվող մի շարք ուսանողական միջոցառումների: Ֆակուլտետի ՈԻԳԻ և ՈԻՄԻ ջանքերով հաշվետու տարում ֆակուլտետում անցկացվել են ուսանողների ընդհանուր գիտելիքների և մտահորիզոնի զարգացմանը ուղղված մի ամբողջ շարք հետաքրքիր ձեռնարկումներ, սեմինարներ, այցելություններ պատմամշակութային վայրեր, թանգարաններ:

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում անգլիական բանասիրության ամբիոնը գործունեություն է ծավալել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ուսումնական աշխատանք
2. Գիտական աշխատանք
3. Գիտակազմակերպական աշխատանք
4. Միջազգային կապերի ընդլայնում
5. Հրատարակչական գործունեություն

Ուսումնական աշխատանքների բնագավառում ամբիոնն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Վերանայվել ու վերամշակվել են ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը և դրան համահունչ՝ իրականացվել է ուսուցման բովանդակության կոորդինացիա զուգահեռ խմբերում, կազմվել են նոր օրացուցային պլաններ:
2. Բարեփոխվել են մագիստրոսական ծրագրերը:
3. Հանգամանալից քննարկման է ենթարկվել հիմնական դասագրքերի արդյունավետության որոշարկման հարցը, կատարվել են համապատասխան փոփոխություններ:
4. Ամբիոնը բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ մշակել է <<Գրահրատարակչական գործ>> մագիստրոսական ծրագիրը, որի արդյունավետ իրականացումը հնարավորություն կտա համապատասխան մասնագիտական դաշտը ապահովելու որակյալ մասնագետներով:
5. Ամբիոնում գլխավորապես հաղթահարված են հեռավար դասավանդման հետ կապված խնդիրները և չնայած ներկա պայմաններում անխուսափելիորեն ծագող հարցերին, ընդհանուր առմամբ, դասերի ընթացքը դրական է:

**Գիտահետազոտական** դաշտում ամբիոնը նույնպես դրսևորել է որոշակի ակտիվություն, թեև ակնհայտ է, որ համավարակի և պատերազմական գործողությունների սթրեսային իրավիճակի պայմաններում նկատելի է գիտական հրապարակումների թվի որոշ նվազում: Այդուհանդերձ, հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում հրատարակվել է.

2 Մենագրություն

5 Դասագիրք և ուսումնական ձեռնարկ

39 Հոդված

4 Ջեկուցումներ գիտաժողովներում և տպագրված թեզիսներ

Ամբիոնն ունի 4 առկա, 2 հեռակա ասպիրանտ և 3 հայցորդ, որոնց հետ տարվող աշխատանքները նույնպես բնականոն ընթացքով առաջ են գնում: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը թողարկել է 2 թեկնածուական ատենախոսություն, որոնց պաշտպանությունները կկայանան առաջիկայում:

Այս ոլորտում ամբիոնը զգալի աշխատանք է կատարում նաև հանրապետության տարբեր բուհերում կատարված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների գրախոսում, փորձաքննություն և քննարկում իրականացնելու գործում:

Ամբիոնի գիտահետազոտական աշխատանքի մաս են կազմում նաև պետբյուջեից ֆինանսավորվող գիտահետազոտական 2 լաբորատորիաները, որոնց ակտիվ աշխատանքի շնորհիվ շարունակվում է 2 կարևոր բազային թեմաների ուսումնասիրության ընթացքը՝ 1. “Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտություններ” 2. “Բրիտանական գրականության և լեզվամշակույթի ուսումնասիրություն”:

Այս շրջանակներում հրատարակվել են բազմաթիվ հոդվածներ՝ այդ թվում նաև արտերկրում: Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիայի ջանքերով մինչև տարվա վերջ ծրագրված է կազմակերպել գիտական սեմինարների երկրորդ շարքը՝ նվիրված Մտաշահարկային (manipulative) մեխանիզմների կիրառումը քաղաքական դիսկուրսում՝ արտերկրից ժամանած մասնագետների ընդգրկմամբ: Աշխատանքային խմբի կողմից անգլերենով կատարված հետազոտությունների արդյունքները հրապարակելը, համացանցում

տեղադրելը, դրանք անգլալեզու լայն հասարակությանը մատչելի դարձնելը չափազանց կարևոր ռազմավարական նշանակություն ունի:

Հաշվի առնելով “Բրիտանական գրականության և լեզվամշակույթի ուսումնասիրություն” բազային թեմայի կարևորությունը և այս լաբորատորիայի շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները՝ ԵՊՀ-ն նպատակահարմար է գտել ավելի սերտացնել կապերը Էդինբուրգի համալսարանի հետ և թարմացնել ԵՊՀ-ի համագործակցության համաձայնագիրը վերը հիշատակված համալսարանի հետ:

Նշված լաբորատորիաներում մշակվող խնդիրների շրջանակում ձևակերպվել և հանձնարարվել են նաև մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաներ, որոնք ուսանողների կողմից մեծ հետաքրքրությամբ են իրականացվել:

Ամբիոնի գործունեությունը ակտիվ է նաև **գիտակազմակերպական աշխատանքների** ոլորտում: Այս ոլորտում ամբիոնը արտասահմանյան գրականության ամբիոնի հետ համատեղ աշխատանք է ծավալել 2022 թ. ապրիլին պլանավորված միջազգային գիտաժողովի կազմակերպման ուղղությամբ:

Միջազգային կապերի ընդլայնման առումով կարևոր դեր են խաղում արտերկրի մեր գործընկերների այցելությունները դասախոսություններ կարդալու, սեմինար քննարկումներ անցկացնելու, ինչպես նաև հրատարակչական համագործակցություն իրականացնելու մտադրությամբ: Ամբիոնը այս առումով պայմանավորվածություններ ունի մի շարք այցելու պրոֆեսորների հետ, որոնք սակայն առավել ակտիվորեն կյանքի կկոչվեն կորոնավիրուսը հաղթահարելուց հետո:

Համագործակցության ընդլայնման հարցում չափազանց կարևոր են նաև ամբիոնի ուսանողների և ասպիրանտների ակտիվ ու արդյունավետ մասնակցությունը Erasmus+ մասնագիտական շարժունության ծրագրերին, որոնք նպաստում են արտերկրի համապատասխան ամբիոնների հետ համագործակցային կապերի սերտացմանն ու ընդլայնմանը:

Հրատարակչական դաշտում 2005 թ.-ից ի վեր ամբիոնի մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում է անգլիագիտական հետազոտությունների հայկական (**Armenian Folia Anglistika**) գրախոսվող մասնագիտական հանդեսը, որն արդեն զգալի առաջընթաց

է գրանցել. Հանդեսն արդեն ընդգրկված է “Crossref”, DOAJ (Directory of Open Access Journals), ERIH plus (European Reference Index for the Humanities and Social Sciences) միջազգային ինդեքսավորման համակարգերում, ներկայացվածություն ունի նաև Google Scholar հարթակում և հաղթահարել է Web of Science համակարգի գնահատման առաջին փուլը: Դեկանը հույս հայտնեց, որ հանդեսի առաջընթացը շարունակական կլինի, քանի որ առկա է գործընկերների հետևողական աշխատանքն ու անմնացորդ նվիրումը:

### **Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոն**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը 2020-21 ուստարվա ընթացքում կենտրոնացրել է իր գիտամանկավարժական աշխատանքը ոչ միայն գրավոր թարգմանության հմտությունների զարգացման վրա, այլև կարևոր շեշտ է դրել բանավոր թարգմանության (հաջորդական և համաժամանակյա) յուրահատկությունների դասավանդման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի աշխատանքները ընթացել են ըստ հաստատված ուսումնական պլանի, միևնույն ժամանակ կատարելով փոփոխություններ հաջորդ տարվա ուսումնական ծրագրերում:

Գ.Բարսեղյանը կարևորագույն ձեռքբերում համարեց նոր, Զբոսաշրջային թարգմանություն (անգլերեն-հայերեն) մագիստրոսական կրթական ծրագրի մշակումը, որն արդեն հաստատվել է ԿԳՄՍ նախարարության կողմից: Այս ծրագրի ստեղծման գործընթացում ամբիոնը համագործակցել է ինչպես ներ-ֆակուլտետային ամբիոնների, այնպես էլ Աստվածաբանության, Իրավագիտության և Տնտեսագիտության ֆակուլտետների հետ: Ծրագրի առավելություններից մեկն էլ այն է, որ բոլոր առարկաները դասավանդվելու են բացառապես անգլերեն լեզվով և համապատասխան որակավորմամբ մասնագետների կողմից:

Նշվեց նաև, որ 2021թ.-ին լույս է տեսել “Translation Studies: Theory and Practice” միջազգային հոդվածների ժողովածուի անդրանիկ համարը:

Կարևորվեց նաև Արդարադատության նախարարության և ԵԼՀ-ի միջև կնքված հուշագիրը, ըստ որի Թարգմանության տեսության և

պրակտիկայի ամբիոնը ձեռք է բերել նոտարական թարգմանչի արտոնագրի համար նախատեսված քննության կազմակերպման և իրականացման իրավունքը:

Չնայած համավարակի առաջացրած դժվարություններին, ուսումնական տարվա ընթացքում ամբիոնում կազմակերպվել են մի շարք արտալսարանային աշխատանքներ, այդ թվում՝ սեմինարներ, հանդիպումներ թարգմանիչների հետ, օտար լեզուներով կինոդիտումներ, քննարկումներ և այլն: Տեղի են ունեցել այցելություններ թանգարաններ, ԹՈՒՄՈ կոնտրոն, կազմակերպվել են միջոցառումներ գրքի տոնի կապակցությամբ: Նշվեց, որ ամբիոնի դասախոսները կատարել են բազմաթիվ թարգմանություններ ԵՊՀ ղեկավարության հանձնարարությամբ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են բազմաթիվ առցանց կրթական սեմինարների, կազմակերպել և իրագործել են վերապատրաստման դասընթացներ մանկավարժների համար, մշակել են բազմաթիվ կրթական մոդուլներ:

### **Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոն**

Հաշվետու ժամանակահատվածը հատկապես կարևոր է եղել միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի համար, քանի որ ուսումնական գործընթացը անխափան կազմակերպելուն, ուսանողների ուսումնական ու գիտական աշխատանքները ուղղորդելուն զուգահեռ ամբիոնը ներգրավվել է միջազգային չափանիշներին համապատասխանող կրթական ծրագրեր, դասավանդման մեթոդներ մշակելու և ամբիոնում ներդնելու գործին:

Մագիստրոսական ծրագրերի շրջանակներում ամբիոնը համագործակցում է ԵՊՀ այլ հումանիտար ֆակուլտետների հետ՝ տնտեսագիտության, սոցիոլոգիայի, միջազգային հարաբերությունների, փիլիսոփայության և հոգեբանության՝ օգտագործելով այդ ֆակուլտետների առաջատար դասախոսների ներուժը:

Միջմշակութային հաղորդակցության ամբիոնը համագործակցում է SS ոլորտի մի շարք կազմակերպությունների հետ (մասնավորապես՝ Synergy Armenia և Microsoft), որոնց մասնագետները վարպետության դասընթացներ են վարում բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների համար ինչպես համալսարանում, այնպես էլ տվյալ կազմակերպություններում:

Ամբիոնի դասախոսների համակարգչային ուսուցման կամ թվային ուսումնառության մեթոդներին տիրապետելու գործում մեծապես նպաստել են ամերիկացի դասախոսները, որոնք ԱՄՆ կառավարության դրամաշնորհային ծրագրերով գրեթե ամեն տարի դասավանդում են ամբիոնում և դասախոսների համար գործնական սեմինարներ և աշխատաժողովներ կազմակերպում:

Դասախոսներ Մ. Յադուբյանը, Լ. Մադոյանը, Ա. Խաչատրյանը, Ս. Ղալթախյանը, Մ. Օհանյանը մասնակցել են ԱՄՆ դեսպանատան, Քեմբրիջի և Մոսկվայի համալսարանի կողմից կազմակերպվող մի շարք գիտաժողովների, որտեղ քննարկվել են առցանց ուսուցման խնդիրներ: Մ. Յադուբյանը Erasmus + PRINTeL պրոյեկտի շրջանակներում վերապատրաստում է անցել Պորտուգալիայում՝ հմտանալով առցանց ուսուցման ժամանակ կիրառվող տեսաձայնագրությունների ոլորտում: Շ. Պարոնյանը և Ն. Հարությունյանը մասնակցել են Հելսինկիի համալսարանում MODEST ծրագրով իրականացվող թեկնածուական դասընթացների մեթոդաբանությունը մշակելու նպատակով կազմակերպված սեմինարներին:

Ուսուցման որակի բարելավմանը մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ ամբիոնում գրեթե ամեն տարի դասավանդում է լեզվակիր դասախոս, և ուսանողները հնարավորություն են ունենում, ինչու չէ, <<փորձարկելու>> իրենց ունեցած գիտելիքը և կատարելագործելու այն: Հաշվետու ուսումնական տարին բացառություն չէր և ֆակուլտետի ուսանողները հնարավորություն ունեցան ամերիկացի մասնագետներից առցանց եղանակով դասեր առնելու:

Ամբիոնը համագործակցում է նաև ԱՄՆ Խաղաղության կորպուսի կրթական ծրագրերի բաժնի հետ:

Անդրադառնալով ամբիոնում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ նշվեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է 6 հոդված և 1 մենագրություն: Ամբիոնն ունի 2 հեռակա ասպիրանտ:



## Անգլերենի թիվ 1 ամբիոն

Անգլերենի թիվ 1 ամբիոնը բացի ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում իրականացվող անգլերեն լեզվի դասընթացներից ամեն տարի անցկացնում է միջազգային TOEFL(ibt) դասընթացներ և քննություններ ինչպես ԵՊՀ, այնպես էլ ՀՀ պետական այլ բուհերի ասպիրանտուրայի հավակնորդների համար:

Ամբիոնը հաջողությամբ իրականացրել է ITEP քննություն՝ անգլերենի իմացության միջազգային վկայագրի տրամադրմամբ (ITEP - international test of English proficiency - անգլերենի իմացության միջազգային թեստ): Միջազգային թեստավորման փորձ ձեռք բերած ամբիոնի մի շարք դասախոսներ անց են կացնում լեզվի իմացության B1, B2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան դասընթացներ: Ամբիոնի մի շարք դասախոսներ հանձնել են անգլերենի իմացության ITEP միջազգային թեստ և ստացել են C1, C2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան միջազգային վկայագիր:

Շարունակվում է FLSP պարբերականի հրատարակությունը ամբիոնի կողմից:

Ամբիոնը զգալի աշխատանք է կատարել նաև մագիստրոսական ծրագրերի վերափոխման և լրամշակման գործում:

Անգլերենի թիվ 1 ամբիոնի դասախոսները հեղինակել են մի շարք դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ և տեխնիկական բառարաններ:

Հավելենք, որ 2019-ի տարեվերջին ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ, անգլերենի թիվ 1 ամբիոնը հանձն է առել կյանքի կոչելու <<լեզվի կենտրոնի>>, ավելի կոնկրետ, <<Լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոնի>> գաղափարը, որի շրջանակներում ֆակուլտետի ամբիոնների աջակցությամբ կազմակերպվել են բարեգործական դասընթացներ /տարբեր օտար լեզուներով/ Արցախցի շուրջ 100 դպրոցականների համար՝ հետպատերազմյան շրջանում ապահովելով նրանց կրթության շարունակականությունը: Դասընթացներն անցկացվել են ավարտական կուրսերի մանկավարժական պրակտիկայի շրջանակներում՝ ֆակուլտետի լավագույն ուսանողների կողմից, ովքեր ջանասիրաբար փորձել են կիսվել երեխաների հետ իրենց ստացած գիտելիքներով /անգլերեն՝ 4 խումբ, ֆրանսերեն՝ 3 խումբ, գերմաներեն՝ 1 խումբ, ռուսերեն՝ 2 խումբ/:

2020-2021 ուստարում Կենտրոնը՝ շարունակելով իր ակտիվ գործունեությունը կազմակերպել և իրականացրել է. ընդհանուր և մասնագիտական անգլերենի մի շարք դասընթացներ՝ գիտելիքների նախնական ստուգմամբ, որոնք անցկացվել են ԵՊՀ լավագույն դասախոսների կողմից հատուկ մշակված ծրագրերով /4 խումբ/:

Ուսումնական տարվա ավարտին Կենտրոնը ԼՄՀ ամբիոնի և PASS ուսուցման կենտրոնի հետ համատեղ կազմակերպել և իրականացել է Cambridge TKT ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացեր Երևանի և ՀՀ մարզերի շուրջ 20 ուսուցիչների համար, որոնց ավարտին մասնակիցներին տրվել են ԵՊՀ և Cambridge Assessment English հավաստագրեր:

Կենտրոնի կողմից մշակվել են դասընթացների ծրագրեր լեզվի իմացության համաեվրոպական սանդղակի (CEFR) բոլոր մակարդակներով (A1-C2)՝ մեծահասակների և տարբեր տարիքային խմբի երեխաների համար:

Կազմվել են նաև լեզուների արագ յուրացման դասընթացների արդյունավետ ծրագրեր՝ ընդհանուր (General), խոսակցական (Spoken), բիզնես հաղորդակցության (Business Communication), իրավաբանության (Law), զբոսաշրջության (Tourism) և այլն:

Կենտրոնը նաև ստացել է համագործակցության առաջարկ American Home միջազգային կազմակերպության հայաստանյան ներկայացուցչի կողմից՝ կազմակերպելու լեզվի ուսուցման և միջազգային թեստավորման նախապատրաստական դասընթացներ:

Այժմ կենտրոնը՝ ԵՊՀ արհեստակցական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում, կազմակերպում է օտար լեզվի դասընթացներ ԵՊՀ աշխատակիցների երեխաների համար, որի արժեքի /13.000 դր./ շուրջ 20%-ը /3000 դր./ վճարվելու է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից:

## Անգլերենի թիվ 2 ամբիոն

Անգլերենի թիվ 2 ամբիոնն իր գործունեությունը ծավալում է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական, հրատարակչական և ուսումնադաստիարակչական:

Ամբիոնը անգլերենի դասավանդումը հիմնականում ապահովում է ԵՊՀ մի շարք հումանիտար ֆակուլտետներում: Դասավանդման հիմքում են բակալավրիատում՝ անգլերենը որպես օտար/երկրորդ լեզու՝ (EFL/ESL) և անգլերենը մասնագիտական նպատակների համար (ESP), իսկ մագիստրատուրայում՝ անգլերենը ակադեմիական նպատակների համար (EAP) դասընթացները:

Անգլերենի թիվ 2 ամբիոնում վերանայվել են բակալավրի ուսումնական ծրագրերը, հաշվի առնելով այն փաստը, որ օտար լեզվի ժամաքանակը նվազեցվել է, և այսուհետ օտար լեզուները որպես *պարտադիր* դասընթաց բակալավրիատում կուսումնասիրվեն ընդամենը մեկ ուսումնական տարի: Այս հանգամանքը թելադրեց որոշակի փոփոխություններ կատարել:

Այնուամենայնիվ, այս ամենը հաշվի առնելով, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև դասավանդման որակը բարձրացնելու նպատակով կիրառվում է տարբերակված անհատական մոտեցում յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ: Դա հնարավոր է դառնում թե՛ դասախոսների աշխատանքի շնորհիվ, թե՛ ամբիոնի կողմից ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ICT) կիրառմամբ:

Նշվեց, նաև որ 2020-2021 ուսումնական տարում թագավարակի պատճառով ժամանակավորապես դադարեցված առկա դասընթացները, ինչպես բոլոր, այնպես էլ Անգլերենի թիվ 2 ամբիոնի դասախոսների կողմից հաջողությամբ անցկացվել են հեռավար, հետևյալ հարթակների միջոցով՝ **MOODLE (BigBlueButton), ZOOM, Google Drive, WhatsApp, Messenger, Skype:**

Գիտահետազոտական աշխատանքն ամբիոնի անձնակազմի գործունեության անքակտելի մասն է կազմում: Կատարվում են ուսումնասիրություններ արդի լեզվաբանության տարբեր ուղղություններով՝ բառագիտության, իմաստաբանության և գործաբանության, լեզուների

գուգադրական ուսումնասիրության, բառարանագրության ինչպես նաև օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ:

Ամբիոնի անդամները նույնպես ակտիվ են միջազգային գիտաժողովների և տարբեր ուսումնական ծրագրերի մասնակցելու հարցում, այդ թվում՝ PRINTEeL նախագծին:

Ֆրանսիայի Լիոն քաղաքում կայացած միջազգային գիտաժողովին իր մասնակցությունն ունեցավ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ե.Երզնկյանը, ով հանդես եկավ զեկուցումով հետևյալ խորագրով «Metaphorization of Economic Concepts in Business Discourse»: Ներկայումս ամբիոնն ունի 5 հայցորդ, որոնք աշխատում են թեկնածուական թեզերի վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսները գիտական տարբեր պարբերականներում, այդ թվում նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունված ամսագրերում, հրատարակել են 21 գիտական հոդված և 2 միջազգային գիտաժողովների թեզիսներ:

Ամբիոնը՝ պատասխանատու լինելով «Անգլերենը ակադեմիական միջավայրում» դասընթացի A1-A2 լեզվի տիրապետման մակարդակների ծրագրի մշակման և իրականացման համար, դեռ անցյալ տարվանից վերանայել է A1-A2 մակարդակների թեստերի ձևաչափը՝ ապահովելով մակարդակների շարունակականությունը:

Անգլերենի թիվ 2 ամբիոնը կանոնավոր պարբերականությամբ հրատարակում է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսը, որը լույս է տեսնում տարին 2 անգամ:

### **Ռոմանական բանասիրության ամբիոն**

2020-2021 ուս. տարում ռոմանական բանասիրության ամբիոնը իր աշխատանքներն իրականացրել է 3 հիմնական ուղղություններով՝ ուսումնամեթոդական, գիտական և թարգմանչական: Ամբիոնը ապահովում է ռոմանական 2 լեզուների դասավանդում՝ իսպաներեն և իտալերեն:

Ամբիոնում կատարված աշխատանքների շարքում նախ և առաջ կցանկանայինք կարևորել բակալավրի նոր կրթական ծրագրերի ստեղծումը:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը ընդունել է այցելու դասախոսների: Կազմակերպել է նրանց դասախոսություններն ու

սեմինարները, ինչպես ուսանողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական կազմի համար :

Ամբիոնի գործունեության առանցքային խնդիրներից է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, հոդվածների հրատարակումը: Այս ուղղությամբ կատարվել են լուրջ աշխատանքներ:

Մասնավորապես, 2020-21 ուս. տարում ամբիոնի դասախոսներ Հ. Բաղդասարյանը և Մ. Մարտիրոսյանը հրատարակել են ,Իսպաներենը միջազգային հարաբերություններում Բուհական դասագիրքը, որի հիմքում ընկած է միջգիտակարգային մոտեցումը: Դասագիրքը լայն ընդունելություն է գտել և ակտիվորեն կիրառվում է ուսումնական գործընթացում:

Ամբիոնը մեծ աշխատանքներ է կատարել նաև դասախոսների վերապատրաստման համար առցանց սեմինարներ կազմակերպելով: Այսպես, ԵՊՀ-ի և Գրանադայի համալսարանի միջև համագործակցության շրջանակում 2021թ. փետրվար և մարտ ամիսներին Գրանադայի համալսարանի դասախոս, դոկտոր Միգել Անխել Սոռոչեն ,Իսպանական միջնադար. արվեստ և մշակույթ թեմայով առցանց դասախոսություններ է կարդացել ամբիոնի իսպանական բաժնի դասախոսների համար (10 ժամ), որը ներառվել է դասախոսների որակավորման բարձրացման ծրագրում:

Ռոմանական բանասիրության ամբիոնում սովորող ուսանողները նույնպես ակտիվ մասնակցություն ունեն Erasmus+ նախագծում : Բարեբախտաբար ամբիոնն ունի նաև լեզվակիր դասախոս, Աննա Մարիա Սեկան, ում դասընթացները նպաստում են իտալական բաժնի ուսանողների հաղորդակցական կարողությունների զարգացմանը :

Իտալերենի դասավանդման գործում մեծ ներդրում ունի Հայաստանում Իտալիայի դեսպանատունը, որը տրամադրում է տարբեր կրթաթոշակներ, կազմակերպում տարբեր միջոցառումներ:

Ակտիվ են նաև Իսպանիայի և Պորտուգալիայի համալսարանների հետ համագործակցության տարբեր ծրագրերը, որոնց մասնակցում են ամբիոնի զգալի թվով ուսանողներ:

Էրազմուս+ և համագործակցության այլ ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում ֆակուլտետի ուսանողները հնարավորություն են ունեցել սովորել արտասահմանյան տարբեր բուհերում:

Ռումանական բանասիրության ամբիոնում արդեն ավանդույթ է դարձել Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպել, իսպաներենը որպես օտար լեզու որակավորման միջազգային քննությունը՝ օտար լեզուներին ներկայացվող եվրոպական արդի չափանիշներին համապատասխան: Հայաստանում Իտալիայի դեսպանատան և Սիենայի համալսարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել է իտալերենի CILS միջազգային քննությունը: Այս քննությունը տալիս է միջազգայնորեն ճանաչված դիպլոմ: Միջազգային համագործակցության առումով նշվեց նաև հետևյալը. սույն թվականի հուլիսի 23-ին ամբիոնի վարիչ Հ. Բաղդասարյանը զեկուցումով հանդես է եկել Հայդելբերգի և Ցյուրիխի համալսարանների կողմից կազմակերպած ,Իսպաներենը Եվրոպայում վիրտուալ Միմպոզիումին, որին մասնակցում էին եվրոպական 35 երկրների իսպաներեն լեզվի մասնագետներ: Միջազգային համագործակցության առումով կարևորում ենք նաև այն հանգամանքը, որ Հ. Բաղդասարյանը ընտրվել է Առաձաքանական և դարձվաձաքանական ուսումնասիրությունների DICUNT միջազգային մրցանակի ժյուրիի անդամ (Իտալիա) և մասնակցել ժյուրիի աշխատանքներին, որը կազմակերպվել է իտալական և իսպանական տարբեր հեղինակավոր կազմակերպությունների կողմից:

Ուսումնական գործընթացներից գատ՝ ամբիոնում կազմակերպվել են մի շարք մշակութային միջոցառումներ:

### **Արտասահմանյան գրականության ամբիոն**

Հաշվետու ուսումնական տարում արտասահմանյան գրականության ամբիոնը արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրված պարտականությունները՝ նկատելի առաջընթաց գրանցելով ինչպես ուսումնակրթական, այնպես էլ գիտամեթոդական աշխատանքների գծով:

Ամբիոնի կողմից հաշվետու տարում զգալի աշխատանք իրականացվեց կրթական երկու նոր ծրագրի մշակման ուղղությամբ: Առաջինը բակալավրի ծրագիր է և ունի <<Արտասահմանյան գրականություն և գրական-հրատարակչական գործ>> անվանումը, երկրորդը մագիստրոսական ծրագիր է և կրում է <<Արտասահմանյան գրականություն և գրական-մշակութային գործի մենեջմենթ>>

անվանումը: Երկու ծրագրերն էլ միտված են արտասահմանյան գրականությունը, որպես առարկա, առավել մոտեցնել գործնական կյանքի պահանջներին: Ծրագրերը մշակելիս ամբիոնը հանգամանորեն ուսումնասիրել է ինչպես միջազգային փորձը, այնպես էլ հանրապետության կրթական և աշխատանքային շուկաների հնարավորությունները:

Ամբիոնում տարվում է ոչ միայն գիտական, մեթոդական աշխատանքներ, այլև միջմշակութային համագործակցության և մշակութային կապեր են ստեղծվում:

Արտասահմանյան գրականության ամբիոնը զարկ է տվել բացարձակ նոր ծրագրերի համակարգի, որտեղ ներառնվում են միաժամանակ և՛ թարգմանությունները, և՛ գրական մշակութային կապերը, և՛ համայնքի հետ կապերի գործառույթները:

Հանդիպում է տեղի ունեցել <<Նյու Մեգ>> ամսագրի գլխավոր խմբագրի հետ: Շնորհանդեսի ժամանակ ներկայացվեց թարգմանական արվեստի և թարգմանության առանձնահատկությունների մասին պրակտիկ ուղեցույց, տրվեցին նաև թարգմանական ընդհանուր ցուցումներ: Որոշվեց 2020-21 ուստարում արտասահմանյան գրականության նախկին և ներկա մագիստրոսների համատեղ ջանքերով թարգմանել գիրք, որը կլինի ամբիոնի ընդհանուր նախագիծը: Աշխատանքը ընթացքի մեջ է, ուանողները արդեն հանձնել են գրքի նախնական տարբերակի մոտ 80 տոկոսը: Ընթացքի մեջ է ևս մի ծրագիր՝ <<Պոետների ակումբը>>, որը անցկացվում է արտասահմանյան գրականության մագիստրոսների, իսկ այժմ արդեն ծրագրին մասնակցող շատ կամավորների ջանքերով: Առաջին արտագնա հանդիպումը տեղի է ունեցել Ծաղկաձորում, որտեղ նիստերի դահլիճում քննարկվել են հայդեգերյան և լոուրենսյան հիմնական թեզերը և դրանց առնչությունը գրականության հետ: Երկրորդ հանդիպումը կայացել է Գլաձորում Վայքի թեմի և համայնքի երիտասարդության հետ համատեղ:

Արտասահմանյան գրականության ամբիոնը անգլիական բանասիրության ամբիոնի հետ համատեղ պլանավորել են անցկացնել ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողով՝/Postmodernism in Humanities/ վերնագրով:

Ամբիոնը հանդես է գալիս գիտական երկու հեռուստատեսային հաղորդաշարերով. առաջին գիտական հաղորդաշարը Անուշ Սեդրակյանի անհատական հաղորդաշարն է Բուն ԹիՎի-ում /Պոստմոդեռնիզմի աղեցությունը գրական, մշակութային և հանրային ոլորտների վրա/: Մյուսը ամբիոնի դասախոսների մեծամասնության նախագիծն է, որը ներկայացված է ‘<<Պանդեմիան և համաշխարհային գրականությունը>> խորագրով:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցում են ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ հանրապետության այլ բուհերում և արտերկրում անցկացվող գիտաժողովներին: Տպագրված հոդվածների քանակը հասնում է 30-ի: Լույս է տեսել Անուշ Սեդրակյանի թարգմանած և կազմած <<Ֆրանսիական արդի պոեզիա>> անթոլոգիան՝ գիտական առաջաբանով և հոդվածներով: Ինչպես նաև լույս է տեսել <<Քամուց քշվածները>> վեպի նրա թարգմանությունը:

Անցած տարվա ընթացքում ամբիոնի մասնագիտական խորհրդում պաշտպանվել է 2 ատենախոսություն: Ներկա դրությամբ ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներ են իրականացնում ութ հեռակա և երեք առկա ասպիրանտներ, ինչպես նաև մեկ հայցորդ:

Տեղեկացնենք նաև, որ առաջիկայում կվերահրատարակվի <<Համատեքստ>> պարբերականը:

### **Գերմանական բանասիրության ամբիոն**

Գերմանական բանասիրության ամբիոնում ներդրվում են դասավանդման նոր մեթոդներ, կատարվում է արդյունավետ անհատական աշխատանք: Այս առումով մեծ ներդրում ունի օտարերկրացի լեզվակիր դասախոս Դանիել Լեպետիտը ով արդեն երկար ժամանակ ակտիվորեն կիրառում է իր դասավանդման փորձը, բացահայտում ուսուցման առավել արդյունավետ ուղիներ:

2020 թվականի աշնանը գերմանական բաժնի ուսանողները կարողացան հաղթահարել գերմանական, ավստրիական և համաեվրոպական կրթական ծրագրերի մրցութային պայմանները և մասնակցել դրանց: Բաժնի ուսանողներն ու դասախոսները ակտիվորեն մասնակցել են ինչպես դեսպանատների այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին:



Ուսումնական գործընթացը ամբիոնում ընթանում է նորմալ հունով, վերանայվում են որոշ դասընթացների բովանդակությունները:

Ամբիոնը մեծ ուշադրություն է հատկացնում դասավանդման գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի որակին, կատարվում են անհատական աշխատանքներ և կոնսուլտացիաներ:

Ամբիոնը ձեռնարկել է նաև մագիստրոս շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը օժանդակող միջոցառումներ: Այս նպատակով ստեղծվել են անմիջական կապեր ինչպես տեղական, այնպես էլ մեր երկրում գործող օտարերկրյա տարբեր կազմակերպությունների հետ:

Դեկանը մեծ ափսոսանքով նշեց, որ այս տարվա հոկտեմբեր ամսին գերմանական բանասիրության ամբիոնը մեծ կորուստ կրեց: Համավարակի պատճառով կյանքից հեռացան ամբիոնի երկարամյա վարիչ պրոֆեսոր Յուրի Գաբրիելյանն ու նրա կինը, նույն ամբիոնի դասախոս, դոցենտ Սուսաննա Առաքելյանը:

Ներկայումս ամբիոնի ղեկավարումը հանձն է առել ք. գ. թ. , դոցենտ Գայանե Սավոյանը, ում հետ երկարաժամկետ գործունեության լուրջ հեռանկարներ են ակնկալվում:

### **Ֆրանսիական բանասիրության ամբիոն**

Հաշվետու տարում, ինչպես և նախորդ տարիներին, ֆրանսիական բանասիրության ամբիոնի հիմնական խնդիրը եղել և մնում է ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպումը:

Հաշվետու ուսումնական տարում արդյունավետ էր նաև գիտահետազոտական կյանքը:

Ամբիոնն ակտիվ մասնակցություն ունի նաև ֆրանսերենի դպրոցական դասագրքերի թողարկման գործին:

Այս գործում, մասնավորապես, ակտիվ գործունեություն են ծավալում ամբիոնի դասախոսներ Թագուհի Բլբուլյանը, Հեղինե Ավետիսյանն ու Գայանե Սարգսյանը:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնի մի քանի հայցորդներ ու դասախոսներ շարունակում են աշխատանքը ատենախոսական թեզերի վրա:

Ամբիոնն ունի նաև երկու հեռակա ասպիրանտ:

Ամբիոնում ակտիվ է նաև միջազգային համագործակցությունը, մասնավորապես, Ֆրանսիայի Մոնպելիե և Էքս քաղաքների համալսարանների, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ: Ցավոք կորոնավարակի համատեքստում որոշ ծրագրեր ժամանակավորապես սառեցվել են (հատկապես փոխայցելություններ, Էրազմուս ծրագրով): Սակայն հաշվետու տարվա մայիսին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության Արևելյան գրասենյակի հետ մեր ամբիոնին կից Ակադեմիական նվաճումների կենտրոնը կնքել է ֆինանսավորվող ծրագիր, որը ի թիվս բազմաթիվ ուսումնամշակութային միջոցառումների նախատեսում է նաև տեխնիկական միջոցների և ֆրանսերենի դասավանդման մասնագիտացված հայտնի կենտրոններին բաժանորդագրության տրամադրում, որոնց շնորհիվ ուսանողների և դասավանդողների թեմատիկ ներկայացումներն ու նորագույն դասագրքերի առցանց օգտագործումը ավելի դյուրին կդառնան եկող ուսումնական տարում:

Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գործընկերները բարձր գնահատեցին և ելույթներ հնչեցրեցին: Ելույթի իրավունք խնդրեցին ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ բ.գ.դ.դոցենտ Հ.Բաղդասարյանը, անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ բ.գ.թ.,պրոֆեսոր Մ.Ապրեսյանը, անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ բ.գ.դ.,պրոֆեսոր Ե.Երզնկյանը: Բոլորն էլ իրենց ելույթում կարևորեցին Գ.Բարսեղյանի թե՛ մարդկային որակները, թե՛ կատարած աշխատանքը:Նշվեց, որ Գ.Բարսեղյանին հաջողվում է համագործակցային մեթոդի օգնությամբ ֆակուլտետում հնարավոր լավագույն արդյունքներ գրանցել: Կարևորվեց նաև այն հանգամանքը, որ Գ.Բարսեղյանը չափազանց սիրված ու գնահատված է ոչ միայն իր գործընկերների կոմից, այլ նրան չափազանց արժևորում են նաև ֆակուլտետի ուսանողները, ինչը,անհերքելիորեն, կարևոր հանգամանք է: Գ.Բարսեղյանի տարեկան հաշվետվությունը գնահատվեց դրական:

## 2. Ընթացիկ հարցեր:

### ՈՐՈՇԵՑԻՆ

- Երաշխավորել ռոմանական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ. Հասմիկ Գրիգորի Բաղդասարյանին՝ պրոֆեսորի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

- Երաշխավորել ֆրանսիական բանասիրության ամբիոնի Բ.Գ.Թ. Ամալյա Հարությունյանի թեկնածությունը դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի **պրոֆ., Բ.Գ.Պ. Արա Առաքելյանի՝** ,Համեմատական գրականագիտության հիմունքներե /մագիստրոսական դասընթաց/ դասագրքի տպագրությունը: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի Բ.Գ.Թ., դոցենտ Գ.Գևորգյանի՝ ,Անգլերենը տնտեսագետների համարե ձեռնարկը տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն :
- Երաշխավորել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս Անի Կոջոյանի թեկնածությունը ասիստենտի պաշտոնի համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Հաստատել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Ղուկասյանի թեկնածուական ատենախոսության <<Դիվանագիտական դիսկուրսի լեզվաոճական բնութագիրը>> թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Պ., պրոֆեսոր Աննա Կնյազյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի ասիստենտ, Բ.Գ.Թ. Ա.Մադոյանին դոցենտի կոչման ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:
- Անգլերենի թիվ 1 ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մ. Ապրեսյանի, դոցենտներ Ա. Ոսկանյանի, Ս. Ասիկյանի, Լ. Մնացականյանի, Ք. Մկրտչյանի և դասախոս Ա. Այվազյանի հեղինակած <<English 4 Law>> վերնագրով դասագրքի տպագրության :
- Հաշվի առնելով վերոնշյալը՝ դիմել ԵՊՀ հումանիտար և  

                  հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է.Ասրիյանին՝ խնդրելով հավանություն տալ 2022-2023 ուս.տարվանից անգլիական բանասիրության ամբիոնում հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի հետ համատեղ բացելու մագիստրոսական նոր «Գրահրատարակչական գործ և խմբագրական աշխատանք» միջգիտակրթական ծրագիրը:
- Միջմշակութային անգլերենի ամբիոնի մագիստրոսական ծրագրի շրջանակներում 1. մշակել և ներակայացնել նոր ծրագիրը մագիստրոսների համար, որի համար անհրաժեշտ կլինի համագործակցել համալսարանական այլ ֆակուլտետների հետ: 2. Դիմել ԵՊՀ հումանիտար և

հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է. Ասրիյանին՝ վերոհիշյալ ծրագիրը բացելու գործընթացի մեկնարկի իրավունք ստանալու խնդրանքով:

ԵԼՀ ֆակուլտետի

ղեկան և գիտխորհրդի նախագահ,

բ.գ.թ., դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝



Մ.Դալայան

01.12.2021 թ.